Դարդանելը անցնելու ժամանակ ափերը յախճապակիի թնդանօթներով կրակեցին, եւ Սուլթանը ոսկէ իր արկղից մեծ մի կտոր հաշիշ հանեց ու կերաւ:

Այն օրը Պոլսոյ ծովը ալեկոծուած էր: Մինարէները ծխնելոյզների վերածուեցան, եւ Գալաթայի կամուրջը, եւրոպական ափը լքելով, գնաց հին Սերայի առջեւ կանգ առաւ:

Այա Սոֆիան իր գագաթին խաչ տնկեց: Սուլթանների մզկիթները սողացին հսկայ միջատների նման: Գալաթայի աշտարակը հառաչեց եւ վայր ընկաւ:

Բայց Մաղօննան Պոլսում չուզեց մնալ:

Փոքր Ասիոյ վրայ մրրիկ էր փչում, գիւղեր եւ քաղաքներ էին այրւում: Ռուսաստանը ոռնում էր երկնքի դէմ:

Զարկաւ եօթը դուռ Մաղօննան եւ մէկը միւսի ետեւից անցաւ:

Հիմա հասել է Հայաստան: Զէ՞ք հաւատում. գնացէք տեսէք, որբերի գիւղը տանող ճանապարհի վրայ: Սարդարապատում:

Մաղօննան թառամել է: Հովերի ակռաները պատռել են նրա գոյնզգոյն զգեստները: Դէմքը գալկացել եւ կնճիռներով է ծածկուել, աչքերը փոս են ընկել եւ վախով նայում են հեռուից մօտեցող գայլերին: Ոտքերը մերկ են, վիզը ծռած:

Սահմանից այս կողմ փախչող գաղթական տատը կանգ է առնում նրա առջեւ եւ կրծքին զարնելով գանգատներ ասում: Գիւղացի Համօն չարչարուած ոտքերից տրեխները հանում է եւ արիւնը մաքրում: Որբերը նայում են, իրենց մայրը յիշում եւ կսկիծով հեռանում:

Մաղօննան մնացել է քարացած: Նա էլ յետ չի վերադառնալ, նա գտել է իր հայրենիքը...

* * *

Ահա եկել ենք ու մեր նիհարած մատերով փորում ենք սառն ու քարացած այդ հողը: Մեր սրտի արիւնով յագեցնում ենք նրա ծարաւը, մեր մսերով նրա քաղցը:

Ծառը իր արմատն է փնտռում:

Բայց արմատը պիտի բոլորուի՞ հողի շուրջը, պիտի կարողանա՞յ ներս նետել իր ծարաւ եւ անօթի ծայրերը:

Եկել ենք տարբեր, տարբեր հոգիներով: Ներս ենք մտել լեռների մէջ, խենթացած որսորդի նման եւ կանգ ենք առել անուժ:

Երազները անհետացած են: Դարերի միջից եկած առասպելը ջարդել է իր գլուխը ժայռերի դէմ: Դեղնած էջերի վրայ բոլոր գրերը խառնուել են:

Եւ սակայն պէտք է ապրել:

Սերգէյ Վարդանեանը կամացուկ ներս է մտել եւ մեզ աչքով է անում: Կոնեակի շիշը գրպանին, ուտելիքները կապոցների մէջ, նա մեզ հրաւիրում է տաքանալու:

Ու մէկը բիւսի ետեւից դուրս ենք գալիս:

* * *

Սանդուխները բարձրանալու ժամանակ, «Այսօր իմ տօնս է», ասում է Սերգէյը, «ոչ ոքի չասես»: Սեղմում եմ ձեռքը: «Սենեակում ուրիշ մարդ կայ, ձայներ եմ լսում»: «Եկել են», պատասխանում է Սերգէյը, «ոմանք հրաւիրուած, ոմանք ոչ»:

Երեկոները, Վարդանեանի դուռը ամէն մարդու առջեւ բաց է: Գինին անպակաս է, ուտելիք կայ: Ցորեկը աշխատում է, առաւօտուայ եօթից ոտքի վրայ է. այցելում է դպրոցները, կարգադրութիւններ անում, պաշտօնեաները ընդունում: Կէսօրից յետոյ, Սերգէյը կաշին փոխում է, ապրում է իր կեանքը:

Դուռը բացուել է: Վիճաբանում են պոռալով:

«Մենք հայերս»,— բացականչում է Զօրեանը, աթոռի վրայ անհանգիստ օրօրուելով, — «մենք ապրում ենք երկու բեւեռների մէջ ճզմուած»: Կեր ու խումը վաղուց է սկսուել: Սեղանը զարդարուած է: Ելեքտրական լամպայի տակ շիշերը փայլփլում են: Լրագիրների վրայ հաց, ձուկ, խաւեար, անկանոն նետուած են, եւ պատահական բաժակները լեցուն են:

Ինձ անծանօթ դէմքեր էլ կան:

Պատուհանից, Արարատի գագաթը ճերմակ ուրուականի նման ներս է նայում: Սենեակը ծուխով լեցուն է:

— Զէ, չէ,— Ա-ն վառում է իր ծխամուրճը,— չէ, ես այն տեսակէտի վրայ եմ»...

— Թոյլ տուէք ասեմ, ընկեր,— սենեակի խորքում մի ստուեր է բարձրանում, բարձր կօշիկներ հագած, ռուսական երկայն շապիկ, դէմքը ծուխի մէջ անորոշ,— «թոյլ տուէք նորից կրկնեմ, որ դուք, բուրժուա մտաւորա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան